ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1

12.07.2022թ. կնքված N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2022/9Հ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի

ք. Երևան **«21» «12» 2022թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ա. Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արմստրոյ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Առաքելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 12.07.2022թ. կնքված N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2022/9Հ պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը և ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 1-ի N 1864-Ն որոշումը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին՝

1.1 2022 թվականին իրականացվելիք ծառայությունների գինը նվազեցնել **2 308 087** (երկու միլիոն երեք հարյուր ութ հազար ութսունյոթ) ՀՀ դրամով, որի արդյունքում 2022 թվականին իրականացվելիք ծառայությունների գինը **9 657 041** (ինը միլիոն վեց հարյուր հիսունյոթ հազար քառասունմեկ) ՀՀ դրամի փոխարեն կկազմի **7 348 954** (յոթ միլիոն երեք հարյուր քառասունութ հազար ինը հարյուր հիսունչորս) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն:

1.2 Հաստատել Համաձայնագրի 2022թ նոր Վճարման ժամանակացույցը համաձայն՝ Հավելված 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«Արմստրոյ» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	ՀՀ, Սյունիքի մարզ,
ՀՀ կենտրոնական գանձապետարան	Ք. Սիսիան, Ա. Մանուկյան 15
ՀՀ 900011002632	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
ՀՎՀՀ 02815457	ՀՀ 220300121294000
գլխավոր քարտուղար	ՀՎՀՀ 09809552
Ա. Երիցյան	Տնօրեն
	Ա. Առաքելյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ

Հաստատված է
N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2022/9Հ գնման պայմանագրի
«21» «12» 2022թ. կնքված
Թիվ 1 Համաձայնագրով
Հավելված թիվ 1

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

(ՀՀ դրամ)

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Գնման ենթակա աշխատանքների անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	98111140/29	Հ-5, /Հ-6/-Նոր Գեղի-Արգել-Արզական-Հրազդան հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000 - կմ10+000 հատվածիհիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողություն	---	---	---	---	---	---	2 961 013	2 961 013	2 961 013	7 348 954	7 348 954	7 348 954	7 348 954

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011002632
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Լ. Երիցյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Արմստրոյ» ՍՊԸ
ՀՀ, Սյունիքի մարզ,
Ք. Սիսիան, Ա. Մանուկյան 15
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
ՀՀ 220300121294000
ՀՎՀՀ 09809552
Տնօրեն
Ա. Առաքելյան
(ստորագրություն)
Կ.Տ.